ները հելլենիզմի ժամանակաշրջանում գերակշռող են եղել և դուրս են մղել մ. թ. ա. V—IV դդ. բնորոշ քարե թանկարժեք կնիքները[34]։

Այսպիսով կարելի է ասել, որ Գորիսից և Բրուն գյուղից հայտնաբերված շարքային նյութերը տեղական են։ Չնայած փոքրաքանակությանը, այդ նյութերի արժեքը կայանում է նրանց անսպառույթ տեսքի մեջ, որը խիստ կարևոր է ժողովրդի կենցաղը, նրա թողած մշակույթը վեր հանելու տեսակետից։ Ընդգրկված լինելով հելլենիզմի դարաշրջանի մշակույթի ոլորտի մեջ (այդ են փաստարկում Արտաշեսի արամեական արձանագրությունը, պատահականորեն հայտնաբերված ապակե սրվակները, Սիսիանի դամբարանի հարուստ նյութերը և այլն), Գորիսի և Բրունի նյութերը լրացնում են Զանգեզուրի շարքային բնակչության կենցաղի վերաբերյալ եղած բացը։ Ահա այս տեսակետից նորահայտ նյութերի գիտական արժեքը մեծ է։ Դրանք միաժամանակ հանդիսանում են մեր նախնիների թողած ուրույն մշակույթի անքակտելի մասը։ Պատահական չէ, որ այդ նյութերը մի կողմից իրենց բազմաթիվ զուգահեռները գտնելով տարբեր վայրերի համաժամանակյա նյութերում, մյուս կողմից իրենց նախաձևերն ունեն բրոնզի ու երկաթի դարաշրջաններին պատկանող հուշարձաններում։ Բնական է, որ այս երևույթը կարող է պերճախոս կերպով վկայել միայն ժողովրդի՝ իր նախնիներից ստացած ավանդույթների պահպանման ու զարգացման մասին։ Մշակույթի հիմնական դեմքը կազմող այս նյութերի կողքին առկա են և այնպիսիները (տվյալ դեպքում քարանձավից հայտնաբերված որոշ ուլունքներ), որոնք կարող են դիտվել իբրև ներմուծված կամ արտաքին ազդակների տակ տեղում պատրաստված արտադրանք։ Սա միանգամայն բնական երևույթ է հելլենիստական դարաշրջանի հզոր մշակույթի ոլորտի մեջ ընդգրկված, բայց հիմնականում իր ներքին կյանքով ապրող Հայաստանի համար։

Պատմ. գիտ. թեկնածու Օ. Ս. ԽՆԿԻԿՅԱՆ

## ԼՈՌԻՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԲՐՈՆԶԵ ԳՈՏԻՆԵՐ

1979 թ. Լորուտ գյուղի հյուսիս-արևմտյան ծայրամասում, Վերին թաղ կոչվող վայրում, Վ. Ավետյանի կողմից պեղվեցին քարարկղային տիպի մի քանի դամբարաններ, որոնցից մեկում մ. թ. ա. VIII—VII դդ. մետաղե և կավե իրերի հետ գտնվեց բրոնզե գոտի, որի ձախ մասը չի պահպանվել (նկ. 1)։ Գոտու պահպանված մասն ունի 76 սմ երկարություն և 14 սմ լայնություն։ Նրա եզրերը զարդարված են երկշարք ոլորապտույտ նախշերով, իսկ լայնակի աջ կողմը, բացի ոլորապտույտից, նաև՝ երկշարք շեղանկյուն նախշերով։ Մակերեսին փորագրված է բարդ կոմպոզիցիոն պատկեր։ Աջից ձախ խիստ ոճավորված խոշոր եղջյուրներով երեք կենդանիներ են (ձախ կողմի ջարդված մասում երևում են չորրորդի հետքերը), որոնք պատկերված են սրընթաց, քառատրոփ վազքի պահին։ Եղջյուրները տափակ են, ունեն կիսալուսնաձև տեսք և նմանվում են Ախթալայում, Խոջալիում և Մարազինդերեսիում գտնված գոտու վրա պատկերված կենդանիներին[1]։ Մարմիններին գցված են օղակաձև զարդով նախշված ծածկոցներ։ Նման ծածկոց է զարդարում նաև Այրումում գտնված ցուլի բրոնզե արձանիկի մարմինը[2]։ Նշված կենդանիների առջևից ընթանում են թռչուններ, որոնք կտցում են հողը, իսկ ետևից ընթացող թռչունները կտցում են նրանց պոչերը՝ կարծես աշխատելով արգելել վազքը։

Առաջին խմբի կենդանիների ետևից վազում են նույնատիպ ծածկոցներով երկրորդ խմբի կենդանիները, որոնք առաջիններից տարբերվում են կարճ, կեռ եղջյուրներով և ոտքերի դիրքով։ Կենդանիների գլուխները առաջ են ձգված, իսկ լայն շրթունքները կիսաբաց են և այն տպավորությունն են ստեղծում, որ նրանք պատրաստվում են կծել կամ շրթունքներով բռնել առջևից վազողներին։ Այս խմբի առաջին և երրորդ կենդանիների վրայով, նրանց ընթացքին հակառակ լողում են երկու ձուկ,

---

34 Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանի հելլենիստական շրջանի գլիպտիկայի մասին, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ», 1974, № 7, էջ 98։

[1] J. de Morgan, Mission scientifique au Caucase, I, Paris, 1889, fig. 190; Дж. А. Халилов, Бронзовые пояса, обнаруженные в Азербайджане, «Материальная культура Азербайджана», IV, Баку, 1962, табл. VI, рис. I, табл. XI, рис. I; Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, т. I, Тбилиси, 1941, стр. 50—51.

[2] С. А. Есаян, Древняя культура племен Северо-восточной Армении, Ереван, 1976, табл. 154.

պարզ երևացող լողակներով, իսկ երկրորդի վրայով, ընթացքի ուղղությամբ՝ երկու թռչուն, որոնք կարծես օրհնում են նրանց վազքը։

Գոտու վրա պահպանվել են նաև մի երրորդ խմբի կենդանիների պատկերները, որոնք նըստած են առաջին խմբի երկրորդ և երրորդ կենդանիների մեջքերին, հետևի ոտքերով հենվելով գավակներին։ Երրորդ խմբի կենդանիներն ունեն փոքր գլուխներ, երկար դունչ, կարճ, սուր եղջյուրներ, փոքր իրան, կարճ պոչ։

Այսպիսով, Լոռուտից գտնված գոտու պահպանված մասում փորագրված է մի կոմպոզիցիոն պատկեր՝ բաղկացած երեք վազող, կիսալուսնաձև եղջյուրներով կենդանիներից, որոնց հետապնդում են կարճ, կեռ եղջյուրներով կենդանիներ։ Առաջին խմբի կենդանիների մեջքերին նստած են երրորդ խմբի կենդանիները։ Քանի որ գոտու կոտրված ձախ մասում պահպանվել է առաջին խմբի կենդանիներին նման կենդանու պատկեր, կարելի է ենթադրել, որ այս տեսարանը կրկնվել է ևս մեկ երկու անգամ։

Առաջին հայացքից անհասկանալի այս տեսարանը բացատրվում է ևս մեկ կենդանու պատկերի առկայությամբ։ Կիսալուսնաձև եղջյուրով առաջին կենդանու աչ կողմից նրան զուգահեռ վազում է կեռ եղջյուրներով մեկ այլ կենդանի։ Նրա գլուխը բարձրանում է առաջին կենդանու մեջքի վրա, իսկ փորի տակից երևում է զուգահեռ վազող հետապնդող կենդանու լարված ֆալուսը։ Այդ տեսարանից կարելի է ենթադրել, որ Լոռուտի գոտու վրա պատկերված են կիսալուսնաձև եղջյուրներով երկնային կովեր, որոնց հետապնդում են սրբազան ցուլերը և եղնիկները։ Լճաշենում գտնված գոտիներից մեկն ունի նման բովանդակություն, փոքր-ինչ այլ մեկնաբանությամբ. սրա վրա պատկերված են վազող էգ եղջերուներ ու այծեր, որոնց նույնպես հետապնդում են արուները[3]։

Լոռուտի և Լճաշենի գոտիների պատկերների միջև կա և ուրիշ ընդհանրություն։ Երկու գոտիների վրա էլ կան կրկնակի ֆունկցիա ունեցող թռչուններ. նրանք արգելակում են էգերի վազքը՝ կտցելով նրանց ոտքերը, վիզը ու առջևի հողը, միևնույն ժամանակ օրհնելով արուներին՝ կատարելու պտղաբերության գործողությունը, խաղաղ ճախրելով նրանց վրայով։ Կոմպոզիցիայի մեջ կան նաև ձկների պատկերներ, որոնք բացակայում են Լճաշենի գոտու վրա։ Ձկները, որպես պտղաբերության խորհրդանիշ, նույնպես օրհնում են այդ գործողությունը, լողալով երթին ընդառաջ։

Լոռուտի գոտին ամբողջովին ծածկված է փորագրված բարդ մոգական պատկերներով, որոնք հասկանալի էին Հայաստանի տեղաբնիկներին։ Այստեղ պատկերված երկնքի, արևի և պտղաբերության աստվածները (թռչուններ և ձկներ) նպաստում էին երկնային կովերի պտղաբերությանը, որը հնագույն մարդու պատկերացմամբ հսկայական նշանակություն ուներ տնտեսության հիմնական ճյուղերից մեկի՝ անասնապահության զարգացման համար։ Լճաշենի գոտու հետ ունեցած նմանությունը, ինչպես և գտնված հնագիտական նյութերը հնա-



Նկ. 1։

---

[3] С. А. Есаян, А. О. Мнацаканян, Бронзовые пояса из Лчашена и Степанавана, «Историко-филологический журнал», 1977, № 3, стр. 276—277, рис. 1а.

բավորություն են տալիս Լոռուտի գոտին թվագրել մ. թ. ա. I հազարամյակի սկզբով։

Երկու այլ գոտիների բեկորներ են գտնվել Թումանյանի շրջանի Օձուն և Կիրովականի շրջանի Վահագնի գյուղերում։ Օձունում գտնվել է գոտու ձախ կողմի մի բեկոր, որ պատկա-



Նկ. 2

նում է որսորդության պատկերներով հազվադեպ հանդիպող գոտիների թվին։ Պահպանված մասի երկարությունը կազմում է 33 սմ, իսկ լայնությունը՝ 14 սմ (Նկ. 2)։ Արտաքին եզրերը զարդարված են զուգահեռ գծերով և եռանկյունիներով։ Ձախ կողմի եզրանախշից դեպի ներս հեռանում են իրար մեջ տեղադրված չորս զուգահեռ եռանկյունիներ, 1—2-րդ և 3—4-րդ եռանկյունիների կողմերի միջև փորագրված են չորս ոլորվող, փոքր գլուխներով օձերի պատկերներ։ Գոտիների այսօրինակ զարդարումը բնորոշ է Հայաստանի և Անդրկովկասի մ. թ. ա. II հազարամյակի վերջի, I-ի սկզբի շատ գոտիների համար (Ստեփանավան[4], Թաքիա[5], Կարմիր բերդ[6], Բջնի[7], Սամթավրո[8], Թրելի[9] և այլն)։

Գոտու պահպանված մասի ձախ կողմի մակերեսին փորագրված են որսի տեսարաններ։ Այստեղ կենտրոնական կերպարներն են երեք հեծյալները, որոնք նստած են խիստ ոճավորված ձիերի վրա. ձիերն ունեն երկար վզեր, փոքր-ինչ նշմարվող գլուխներ՝ ցցված ականջներով, երկար դնչեր՝ թռչնի կտցի նման բացված բերաններով։ Ձիերի իրանները փոքր են, խիստ կորացած, կարճ ոտքերը ավարտվում են թռչնի թաթերով։ Երեք ձիերի գլուխներն էլ իրար են միացված օձ հիշեցնող, ալիքաձև գծով։ Հեծյալները պատկերված են անֆաս և նույնպես խիստ ոճավորված են, առանց գլխի մանրամասների ընդգծման։ Առաջին, ամենախոշոր հեծյալի ձախ ձեռքը կորաձև բարձրացված է գլխի վրա։ Աջ ուղիղ ձգված ձեռքում պահվում է նետը՝ եռանկյունաձև ծայրապանակով։ Երկրորդ և երրորդ հեծյալների իրանները առաջին պլանին մոտենալով փոքրանում են և մեկնաբանվում փոքր-ինչ այլ կերպ. ձախ ձեռքերը հետ են քաշված և ծռված են արմունկներում։ Աջ ձեռքով նրանք դուրս են քաշում ձախ կողքերից կախված թրերը։ Առաջին հեծյալի կուրծքը ծածկված է կետազարդ նախշով, իսկ մյուս երկուսի մոտ այդ նախշը բացակայում է։ Ըստ երևույթին նկարիչը ամենախոշոր հեծյալին (հնարավոր է առաջնորդին) պատկերել է զրահաշապիկ հագած, իսկ մյուսներին՝ առանց դրա։

Հեծյալների առջև, ներս ընկնող եռանկյունիների երկու կողմից պատկերված են երկուական զույգ առասպելական կենդանիներ։ Ամեն զույգում կա մեկ խոշոր և ավելի փոքր կենդանի (ըստ երևույթին էգ և արու), որոնք կանգնած են դեմ-դիմաց։ Նրանց իրանները նման են ձիերի իրաններին, տարբերվելով նրանցից խոշոր լայն բացված երախներով և մեջքի վրա բարձրացող երկար կորաձև պոչերով։ Ինչպես ձիերը, նրանք էլ ունեն թռչնի թաթեր։ Բոլոր չորս կենդանիներն էլ խոցված են նետերով։ Նետերը խոցել են վիզը, դուրս ելել հակառակ կողմից, ոտքերին զուգահեռ։ Այս տեսարանում նկատում ենք նկարի տարածական լուծման նախնական, պարզունակ մի ձև։ Երկու զույգ կենդանիներին խոցող նետերն ունեն միևնույն դիրքը, բայց դա իրականում հնարավոր չէ, քանի որ արձակված նետերը պետք է խոցեին մեկի վիզը, իսկ մյուսի նրախը կամ կուրծքը։ Նկարիչը ձգտել է պատկերել որսորդներից փախչող կենդանիներ, որոնք նետահարվելով, հոգեվարքի պահին լայն բացել են երախները։ Սակայն տեղի պակասության պատճառով կենդանիներին դասավորել է դեմ-դիմաց

---

[4] С. А. Есаян, А. О. Мнацаканян, Նշվ. աշխ., էջ 280, նկ. 2։

[5] А. А. Мартиросян, Т. С. Хачатрян, Комплекс изделий из могильника Такии (Агвесадзор), «Известия» АН Армянской ССР (общ. науки), 1959, № 11—12, стр. 93.

[6] С. А. Есаян, Ереван (археологический очерк), Ереван, 1969, табл. 27.

[7] В. Аветян, Л. Биягов, Новые находки бронзовых поясов в Армении, «Вестник общ. наук» АН Армянской ССР, 1977, № 12, рис. 1.

[8] Н. Урушадзе, Бронзовые пояса из Мцхета-Самтавро, «Декоративное искусство СССР», 1977, № 6, стр. 47—48.

[9] Н. Абрамишвили, Бронзовый пояс из Трельского могильника, в сб. «Друзья памятников культуры», № 39, Тбилиси, 1975, стр. 82.

և պայմանականորեն որոշել տարածային լուծումը, որը հասկանալի է եղել ինչպես իրեն, այնպես էլ պատվիրատուին։

Գոտու պահպանված մասի աջ կողմում նկարված են երկու զուգահեռ շրջանակներ, որոնց եզրերը զարդարված են հորիզոնական



Նկ. 3

ալիքաձև գծերով և եռանկյունիներով։ Վերին շրջանակի մեջ տեղադրված են երկու այծ, իսկ ստորին չարդված մասում երևում է մեկ այծի գլուխ։ Կենդանիները պատկերված են արագ վազքի պահին։ Նրանց մարմինները խիստ ձգված են, կեռ եղջյուրներով գլուխները բարձրացված, բերանները լայն բացված, ոտքերը հավաքված են թռիչքի համար։ Այս տեսարանը, որը մյուսներից անջատված է վերոհիշյալ ուղղանկյուն շրջանակներով, օրգանապես կապվում են որսի տեսարանի հետ, ուր կենդանիները փախչում են հետապնդող որսորդներից։

Նման շրջանակներով գոտիներ են հայտնաբերվել Կարմիր բերդում[10] և Քալաքենտում[11], սակայն այնտեղ պատկերված են ձիեր և առյուծներ։ Այս հանգամանքը, ինչպես և գոտու բովանդակության նմանությունը Ստեփանավանում և Կարմիր բերդում գտնված գոտիների հետ, հնարավորություն է տալիս Օձունի գոտին թվագրել մ. թ. ա. II հազարամյակի վերջով և I-ի սկզբով։

Երրորդ գոտու բեկորը ունի ավելի պարզ նախշեր։ Կենտրոնով անցնում է լայն ուղղանկյուն շրջանակ, որի երկու կողմերից ազատ թողած եզրեր են։ Շրջանակի ներսում արված են երկու զուգահեռ գծեր, որոնք նման են շրջանակի եզրերին։ Շրջանակի շուրջը և ներսի տարածությունը ծածկված է արևը խորհրդանշող «վազող» ոլորապտույտների նախշով (Նկ. 3)։ Նույնատիպ շրջանակներով գոտիներ, որոնք, սակայն, ծածկված են ոչ թե վազող ոլորապտույտներով այլ կետազարդ նախշով, լավ հայտնի են ուրարտական հուշարձաններից (Իգդիր[12], Կարմիր բլուր[13], Զոդ[14] և այլն)։

Այս տիպի գոտիների աջ կողմերը հաճախակի զարդարված են լինում կենաց ծառի պատկերներով։ Առանց շրջանակի, միայն «վազող» ոլորապտույտով զարդարված գոտիներ են գտնվել Խրտանոցում[15], Մուխանում[16] և պահվում են Ադանայի թանգարանում[17]։ Վահագնիում գտնված գոտին հանդիսանում է առաջինը, ուր սինթեզվում են ուրարտական երկու ձևերը։ Ուրարտական գոտիների հայտնի օրինակները հնարավորություն են տալիս Վահագնիում գտած գոտին թվագրել մ. թ. ա. VII—VI դդ.։

Նոր հայտնաբերված, հազվադեպ հանդիպող այս գոտիները ոչ միայն հարստացնում են մեր պատկերացումները հնագույն նկարիչ-փորագրողների արվեստի մասին, այլև արժեքավոր նյութեր են տալիս տեղաբնիկների պաշտամունքային պատկերացումների, սովորույթների, որսի, ռազմական գործի և հոգևոր կյանքի ուսումնասիրության համար։

---

[10] С. А. Есаян, Ереван, табл. 27.

[11] А. А. Ивановский, По Закавказью, «Материалы по археологии Кавказа», VI, М., 1911, табл. I, рис. 2.

[12] Б. А. Куфтин, Урартский колумбарий у подошвы Арарата и Куро-Араксский энеолит, «Вестник музея Грузии», XIII—B, 1944, рис. 26.

[13] Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, рис. 43, 82.

[14] Ս. Ա. Եսայան, Ուրարտական գոտիով դամբարան Զոդում, «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 3, նկ. 1։

[15] С. А. Есаян, Г. А. Оганесян, Каталог археологических предметов Дилижанского краеведческого музея, Ереван, 1969, табл. X III, рис. 5.

[16] В. Аветян, Л. Биягов, նշվ. աշխ., նկ. 2:

[17] O. A. Taşvurek, The Urartian Belts in the Adana Regional Museum, Ankara, 1975, ill. 28.

Պատմ. գիտ. դոկտոր Ս. Ա. ԵՍԱՅԱՆ
Վ. Վ. ԱՎԵՏՅԱՆ